

համատեղութիւնները։ Այդ կորիզն է որ կեանք կու տայ շրջանակի մոլորակներուն։

Կորսուած առարկայի մը անզիտակից պատճառն է, ֆրոյտի համեմատ, այդ առարկային անշահեկան գառնալը։ Ուրեմն զրամապանակ մը կորսանցովը ալ չի հետաքրքրուիր զրամով։ Այսած անհատի մը տուած նուէրին կորուսար այդ անհատին հանդէս սիրոյ նուազութիւն ցոյց կու տայ հոգեվերլուծման համեմատ։ Ֆրոյտ ամէն զործունէութեան տակ կը գտնէ թացուն՝ սեռականութիւնը։ Հոգեկան բարդ կեանցը այնքան պարզ չէ ասկայն։

Հոգեվերլուծմը կ'ենթաղրէ թէ եւ բազը վանուած բաղդանքի մը իրականացումն է, կը մնանի անզիտակիցին մէջ անձանօթ ձգութեարով և կը յայտնէ անհատին ներքին կեանցը։ Այս անզիտակիցին ծագումը շատ հեռաւոր է, երախայա-

կան կեանքն կը սկսի։ Ֆրոյտ կը մոռնայ որ ամէն երազ անզիտակից չէ, տարրերը մօտաւոր տպաւորութիւններու արդինցն են։ Երազին կորիզը նոր է, ոչ թէ տարեւոր։ Պատկերներու անկանոնութեան պատճառը ուշադրութիւնն է բանականութեան բացակայութիւնն է։ Զուտ բարոյական վիշտեր կան, ուրախութիւններ կը ծնին՝ որոնք ոչինչ ունին մեր զգայարաններուն հետ, ոչինչ անցեալ կեանքի հետ։ Անզուց անուրանալի է անզիտակիցին վերազարթնուումը մեր երազներուն, մեր զիտակցութեան, հիւանդներու զառանցանքներուն մէջ։ Հոգերանութիւնը կ'ընդունի արդին թէ ոչինչ կը կորսուի մեր տպաւորութիւններէն։ Ասոնց կը մանզիտակցութեան մէջ յարմար առթիւ արտայայտուելու համար։

(Շարումակելի)

ԳԱՐԱԿԱՆ

## ԱՅԼԵԽԱԱՅԼԵ

# ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

## ՀԱՅՆԱԽԱԿԱԿԱ

(Շարումակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 207)

Է. ՆԻԿ. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

... Ն. Տիգրանեանի առանձին տեսրակներով հրատարակած եղանակներից առաջինն անւանում է Շահնազ (Պարսկական ֆանտազիա) և երկրորդը հեյդարի։ Այս երկու եղանակներն էլ պարսկական երաժշտութեան մէջ բռնում են իթէ ոչ առաջնակարգ, գոնէ աչքի ընկնող տեղ։ Սրանց մասն են կազմում պարսկական, կամ աւելի ճիշտն ասած՝ արևելեան երաժշտական ստեղծագործութիւնների այն ահազին ընտանիցի, որոնց այնքան անհամար են, այնքան ինքնուրոյն ու գեղեցիկ։

Պարսկական համանման եղանակների մի ամրողացումն անւանում է դաստղեան։ Ամեն մի դաստղեան ունի իր մուղամմարները։ Այսելեան երաժշտները միաժամանակ ամրող դաստղեաներ առհասարակ չեն նապում ու երգում, այլ երգի ու երաժշտութեան նիւթ ընտրում են միայն մուղամմաթները։ Այս մուղամ-

մաթները ծանօթ և հմտւալ լուղին յիշեցնում են արևմտեան երաժիշտաների յօրինած օպէբաների զեղեցիկ արդաները։ Մուղամմաթիներն երգում են զանազան խօսքերով՝ կամ աւելի ճիշտն ասած՝ պարսից եղանակները շատ խօսքեր ունեն։ Արանից պէտք է եզրակացնել, որ երաժշտական ստեղծագործութիւնները, որոնք հասել են մեզ, աւելի հին են եղել քան երգութ խօսքերը և կամ ոչ թէ եղանակներն են յարմարեցրած եղել խօսքերին, այլ բանաստեղծութեան սիրահար ժողովուրդը խօսքերն է յարմարեցրել արդէն գոյութիւն ունեցող եղանակներին։ Ամէն մի մուղամաթ ունի իր շիւեն, բասիփի և գոչի։

Մուղամմաթների ծաղկաբաղն անւանում է և մուրաքիար-իանելին որին երրուսկան երաժշտութեան մէջ անւանում են պոպուրի։

Լինելով ձայնագորութիւնից զուրկ, պարսից երաժշտութիւնը դարերի ընթացքում ենթարկել է անվերջ ժոփոխութիւնների, քմանաճուռութիւնների, միշտ յարաժորւելով ժամանակակից վարք ու բարքին, ճաշակին և հասկացողութիւններին։

Սակայն այս վերին աստիճանի անմիտիքար իրողութեան մէջ ուրախալին այն է, որ... Ձիզրանեանն այնքան եռանդով աշխատում է մի կողմից ազատել կորուսից հինաւորց արևելքի աննման երաժշտական ստեղծագործութիւնները, իսկ միւս կողմից միջնորդ է հանդիսանում արևմտեան և արևելեան երաժշտութիւնների փոխադարձ շփման։ մի շփում, որ անշուշտ ունենալու է խիստ ցանկալի հետևանք։

« Հաննազը », որին Պ. Ձիզրանեանն անւանում է պարսկական ֆանտազիա, ինչպէս արենելքի համարեա բոլոր եղանակները, մի տիտոր և մելամազդոս մեղեղի է։ Չնոռանանը յիշել, որ պարսից համարեա բոլոր դասական եղանակները կում են նոյն զրոշմը Արևելքի երաժշտները միայն այս տիտոր և սրամաշ ձևն են ընդունել ազդելու արտի վրայ, կրթելու մարդու զգացմունքներն ու հակումները, և պարսից երաժշտն այս տիտոր տպաւորութիւնից դուրս բերելու, իր եղանակի ճնշման ազդեցութիւնից ազատելու համար՝ բռն եղանակին կցում է փոքրիկ « թամնիքը », որն ինքն ըստ ինքեան բռն եղանակի հետ ոչ մի առնչութիւն չունի և ծառայում է լոտիկն ըիչ կազդուրելու և նոշման ազդեցութիւնից ազատելու համար։ Ես այնպիսի ուրախ եղանակը, ինչպիսին է « Շուգեանը », որն այլապէս անւանում է « մայիսին երաժշտութիւն », շատ ու շատ հազւագիւտ է։

Հաննազն սկսում է զեղեցիկ վարիացիաներով։ լսողն զգում է մի յուզած արտի ալեկոծում, որը սակայն հետզհետ նմանում է անուշ զգացմունքից բռնած արտի բարախիմ, Աւանդիկն հետզհետ խրատուզում է կեանցի ալիքների մէջ, կեանըքի, ուր չկայ ոչ մի կատարեալ վատու, ոչ մի յարատն երջանկութիւն, այլ ուր կայ սիրու, որը հեկեկում է ու տանջուում։ Ես այս տպաւորութեան տակ եղանակը պատմում է իրականութիւնը կեանըքի դառնութիւնները, որոնց սակայն իրենց ահաւոր ոյժով չեն կարողանում տապալել սիրու, չեն ոչնչացնում ազնիւ յոյսը։ Ակսում է արտի կոփւր..., զա զալիք երջանկութիւնների նախարանն է... սիրան սկսում է ալեկոծել ուրախութիւնից, եղանակն յիշեցնում է ուրախութեան լացը, երջանկութեան արտասուլները։ Ապա սկսում է թամնիքը (Փինալը), խիստ մեզմ ու անուշ, որի միջն մասը ըիչ միակերպ է։ Եղանակը վերջանում է մի մեզմ ու անուշ կոչով, որն ուղղած է դէպի կեանըքը, դէպի երջանկութիւնների հմայիչ աշխարհը։ և վերջացող մեղեղին իր սրտայոյզ ձայներով, արևելեան եղանակին յատուկ ընթացութեամբ կարծեն մըմջում։ « կեանըք ըստ բալցը ես, կեանը զու երապուրիչ ես...»։

Բայց բոլորովին այլ է երկրորդ եղանակի թողած տպաւորութիւնը։ « Հեյ-



դարին» մեզ վրայ այն ազդեցութիւնը չգործեց, ինչ թողնում է «Շահնազը»: Այս եղանակը կարծես աւելի նորագոյն ժամանակների արտադրութիւն է: Նա կլասիկական երկի տպաւորութիւն չի թողնում և այնքան խոր չի ազդում լուղի վրայ: Չնայելով սրան՝ եղանակը կազմում է մի ամբողջութիւն, մի սկսած և վերջացրած գործ, որպիսի յատկութիւններ շատ բիշ կարելի է գտնել արեւելեան երաժշտական ստեղծագործութիւնների մէջ: Եղանակի սկիզբն ուրախ տպաւորութիւն է ներգործում լուղի վրայ: Կարծես սիրտը տօնում է իր յաղթանակը: Կեանցը գեռ ևս իր աւերիչ հետքը չէ թողել անմեղ և անվիշա հոգու վրայ և սիրտը սաւառում է երջանկութեան և բաղդաւորութեան հմայիչ երազների մէջ: Բայց շատ չանցած, երաժշտութիւնն ստիպում է լուղին խորհել, զսպել իրան: Նա զգալ և հասկանալ է տալիս, որ նիփթապաշտ կեանցը երեւակայական թոփշբների մի անվերջ շարք չէ, որ կեանցի թոյնը վաղ թէ ուշ դադարեցնում է սիրտը: Նա կորում է երեւակայութեան թեսքը և մարզը որպէս մի անզօր և անմիթթար արարած ստիպած պէտք է լինի ճաշակել կեանցի պրօզայի անգութ մրուրը: Եւ այս վերջին դրութեան մէջ գտնուող սիրտը, կարծես կանչում է հեռու երջանկութիւնը, անցած ու զնացած վայելքները: Եւ այսպէս վերջանում է եղանակը:

Բայց թէ Պ. Տիգրաննեանն իր կազմած եղանակների մէջ, որքան հաւատարիմ է մացել արեւելեան երաժշտութեան բուն սպուն և բովանդակութեանը, զա կարող է զգալ ամեն մի արեւելեան երաժշտութեան ծանօթ մարզ: Մեր կարծիքով՝ երաժշտի զլիաւոր արժանաւորութիւններից մէկը հնց այդ հաւատարիմ մալն է, նրա վերին աստիճանի մանրակրկիտ ուսումնասիրութիւնն է: Նա ամիսներ և երբեմ իսկ տարիներ անխօնջ աշխատանք գործ դնելով, մի պարբերութեան, մի վարիացիայի համար, եղուպական գործիքների վրայ, չափի ու կանոնի վրայ հիմնած ձայներով նւազում է անզուսպ, անսանձ և ամեն մի չափ ու կանոն արհամարող արեւելքի որդու սրտի յոյզերը: Մեր այն ակնարկն, թէ Պ. Տիգրաննեան շատ զանդաղ է առաջ տանում գործը, թէ նա ուշ-ուշ է լոյս ընծայում իր պատրաստած եղանակները... Նրան լաւ ճանաչողներից մէկը, բոլորովին արգարացի կերպով մեզ նկատեց, թէ «Տիգրաննեան զերմանական զաստիարակութեան արդինքն է. չ՞ որ այդ զաստիարակութեան նշանարանն է ուսումնասիրել խորը, երկար և բազմակողմանի կերպով և ապա ձեռնարկել զործի: Կարծիքը բոլորովին ճիշտ էր, այդպէս է Պ. Տիգրաննեան: Բայց թէ նա մըքան է եւրոպականացրել արեւելքի հինաւորց եղանակները, օտարի ականջին բնչպէս են հնչուում: Նրա կանոնի ու չափի վերածած «Նորա-Հարս», «Բայաթի-Ծիրազը», անզուսպ «Բայաթի-Քիւրդը», չճնադ «Շահնազը» և այլն, այդ մասին խօսելը մենք թողնում ենք պրօֆէսօր Սլուզէովին...»

Բայց մինչև այսօր ձայնազրած և հրատարակած եղանակներից, յարգելի երաժշտը պատրաստել է նաև «Զար-զիահ», «Շուրը» և «Նովրուզ արարի» նշանաւոր ու գեղեցիկ եղանակները:

ՊԵՏՐՈՍ ՄՈՋՈՒԽԵԱՆ